ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/38, 18.03.2019թ.

Բողոք բերող անձ՝ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ

Պատվիրատու ՀՀ պաշտպանության նախարարություն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթ

Գնման առարկա Դերձակի ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 1 փողոց
Էլ.փոստ՝ vaghinak.yeghiazaryan@mail.ru
հեռ: (093) 31 88 99

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթ

ԲՈՂՈՔ

- **Բողոքի նախապատմությունը և փաստերը**

ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային հայտ է ներկայացրել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ կից ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, որի վերաբերյալ ստացել է ծանուցում, որ բեռնումն հաջողությամբ իրականացվել է:

Սակայն 08.02.2019թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ **«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտում փաստաթղթերը կցված չեն եղել և գնահատող հանձնաժողովը գնահատելու հնարավորություն չի ունեցել:**

Անհրաժեշտ է նշել, որ մուտք գործելով www.armeps.am կայք և ուսումնասիրելով վերը նշված ծածկագրով ընթացակարգի կարգավիճակը, նկատելի է այն հանգամանքը, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի անվան կողքին «հայտ» անվանումով սյունակում առկա է ZIP անվանումով ֆայլը, որը ներբեռնելուց հետո պարզվում է, որ վերոհիշյալ ֆայլը դատարկ է, այսինքն հայտում բացակայում են կցված փաստաթղթերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ N 15-11593-19
5 «18» 03 2019թ.

- <u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները</u>

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:***

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:***

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Ավելին, նման պայմաններում Պատվիրատուն կարող է կնքել պայմանագիր **ավելի բարձր գին առաջարկած** մասնակից հետ, **ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:**

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Չկայացած հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթը:

Կից ներկայացվում է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը՝ էլեկտրոնային կրիչով:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ –ի տնօրեն Վ. Եղիազարյան

18.03.2019թ.